**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Ազգային ժողովի աշխատակարգի 87-րդ կետով, հանձնաժողովը որոշում է.

1. 2022 թվականի հունիսի 23-ին՝ ժամը 11:00-ին Ազգային ժողովի 334-րդ դահլիճում հրավիրել խորհրդարանական լսումներ, որի թեման է. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-301-17.06.2022-ՊԻ-011/) և հարակից օրենքների նախագծերի փաթեթի քննարկում»:

2. Հաստատել խորհրդարանական լսումների ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Հավելված 1**

**«Խորհրդարանական լսումներ հրավիրելու մասին» Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի որոշման**

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

| | |
|---|---|
| **ԹԵՄԱՆ** | ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-301-17.06.2022-ՊԻ-011/0) և հարակից օրենքների նախագծերի փաթեթի քննարկում» |
| **ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ** | ք. Երևան, Բաղրամյան 19,<br>334 սենյակ |
| **ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ** | 2022 թ. հունիսի 23 ժամը 11:00 |
| **10:30-11:00** | Մասնակիցների գրանցում |
| **11:00 – 11:05** | Բացման խոսք՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Արթուր Դավթյան** |
| **11:05 – 11:20** | Օրենքի նախագծերի փաթեթի հիմնական դրույթների ներկայացում<br>Զեկուցող՝ նախագծերի փաթեթի հեղինակ, պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Վահագն Հովակիմյան** |
| **11:20 - 11:50** | Հարցեր զեկուցողին (մինչև 3-ական րոպե) |
| **11:50 – 12:00** | Զեկուցում՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ |
| **12:00 – 12:30** | Ընդմիջում |
| **12:30 - 14:00** | Մտքերի փոխանակություն (ելույթներ մինչև 5-ական րոպե) |
| **14:00 – 14:20** | Եզրափակիչ ելույթ՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Վահագն Հովակիմյան** |
| **14:20 - 14:30** | Ամփոփում՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Արթուր Դավթյան** |

Լսումները նախագահում է պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Արթուր Դավթյանը:

Հարցերի և ելույթների համար հերթագրումն իրականացվում է հարց տվողի կամ ելույթ ունեցողի անունը, ազգանունը և կազմակերպության անվանումը հանձնաժողովի փորձագետներին տեղեկացնելով (հերթագրվելով): Հարցերին կարող են պատասխանել նաև հիմնական զեկուցողի հրավիրած անձինք: Սույն ընթացակարգով նախատեսված ժամկետները կարող են փոփոխվել լսումները նախագահողի կողմից: